



Ե Ր Կ Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

## Խմբագրական

### Կայացման տանում են միասնական քայլերը

Ես մեկ տարի՝ իր բազմաբնույթ զարգացումներով, կատարած ու թերի մնացած գործերով, նվաճումներով ու ձախողումներով, հին ու նոր մարտահրավերներով մոտենում է իր տրամաբանական ավարտին՝ տեղը զիջելով նոր՝ գալիք տարվան: Ասել է թե՛ նորը ծնում է նոր անելիքներ ու նորովի մոտենում:

Սովորաբար, ընդունված է յուրաքանչյուր անցնող տարում ի մի բերել անցածը, շահածն ու կորցրածը, կարողանալ ճշմարիտ գնահատական տալ, դաս առնել անցածից, ու անցածը թողնելով հետևում՝ նոր էջ բացել գալիք տարվա համար:

Անցնող 2015 թվականը ՀՀ Դաշնակցության համար, ինչպես ես ամեն մի անցնող տարի, նախ ես առաջ՝ պայքարի տարի էր, որովհետև Դաշնակցությունն ինքը պայքարի կուսակցությունն է. պայքար այնտեղ՝ որտեղ կա խնդիր, որտեղ կա հայության լինելիության ուղղված բազմապիսի մարտահրավերներ: Պայքարի հարթակները տարբեր են՝ Հայաստան, Արցախ, Ջավախք, Սփյուռք, պայքարի ձևերը՝ նույնպես, բայց պայքարի ուղիները բերում են մեկ հանգրվանի, որը երբեք ես ոչ մի տարում Դաշնակցության համար չի փոխվում:

2015 թվականին Դաշնակցությունը կընթացի իր 125 ամյա հոբելյանը՝ միաժամանակ որբորդ անգամ ապացուցելով, որ իր կենսագրությունը ոչ թե լոկ տարիների, այլ կատարած գործերի հանրագումար է, իսկ 125 տարիների կատարած գործերի հանրագումարն ավելի քան խոսում է: 2015-ը մեկ անգամ ես փաստեց, որ Դաշնակցությունը գործի, աշխատանքի եւ կենսունակ կուսակցություն է, հայ իրականության մեջ միակը թերեւս, որը կա ամեն տեղ, որտեղ կա հայ, կա հայի հարց ու խնդիր:

Նվիրական գործն անուրանալի է, ինչքան էլ նրա վրա փորձեն կեղտ շարտել կամ խեղաթյուրել: Նվիրական գործին նախանձողներ միշտ էլ լինում են, կարելուրդ՝ գործի ուղեծիրը չփոխել: Դաշնակցությունը շարունակում է քայլել նույն ուղով:

2015 թվականը նոր մարտահրավերներ է նոր քաղաքական զարգացումներ բերեց իր հետ: Սահմանային լարված իրավիճակը սկսվեց փոխարինվել «պատերազմ» եզրույթով, ու կարծես թե ժողովուրդը կամաց-կամաց սկսեց սթափվել անորոշ թմբիկից ու հասկանալ, որ սահմանին կանգնած զինվորը բացարձակ արժեք է եւ իր անվտանգության գլխավոր երաշխավորը, սկսեց հասկանալ, որ պատերազմը սոսկ սահմանին կանգնած զինվորի համար չէ, պատերազմի կանխարգելումն ու Ադրբեյջանի ստորաբաժանների հակադարձելը համահայկական խնդիր է, ու այդ պայքարում բոլորն են զինվոր: Միասին գործելու, ուժերը մեկտեղելու գաղափարն այլևս այլընտրանք չունի, ու սա կարծես թե սկսել է ամրանալ մեզանում՝ ինչքան էլ տարբեր հայացքներ ու գաղափարներ բաժանեն մեզ:

Իզուր չէ բանաձևած, որ ՀՀ-ն եւ Արցախի Հանրապետությունը բնական դաշնակիցներ են Արցախի խնդրի լուծման պայքարում: Այդ խնդիրը Դաշնակցությունն իր՝ աշխարհի տարբեր երկրներում գործող Հայ Դատի գրասենյակների ու հանձնախմբերի համատեղ աշխատանքներով հնչեցնում է աշխարհի տարբեր ամբիոններից՝ ԱՄՆ կոնգրեսից մինչև Ավստրալիայի խորհրդարան, Արցախի ներքին դաշտում իր գործուն մասնակցությունն ունենալուց մինչև արտաքին ճակատում, միջազգային բեմերում Արցախի իշխանությունների ներկայության ապահովում:

2015-ին էլ տեսանք, որ Դաշնակցությունն Արցախում գործում է հանունի գիտակցումով:

Թող 2016 թվականը հայության համար ձեռքբերումների մի նոր էջ բացի եւ յուրաքանչյուր ազգանպաստ մտահղացում, ծրագիր կամ գաղափար իրականություն դառնան: Միասնական լինենք:



### ՀՀ Կրթության ԿԿ-ի շնորհավորանքն Ամանորի եւ Սուրբ Ծնունդի կապակցությամբ

Ավարտին մոտեցավ 2015 թվականը: Անցնող տարին հայ ժողովրդի եւ Արցախի համար լի էր կարեւոր իրադարձություններով: Այս տարի համաշխարհային ամենաթեժ հարթակներում տեղի ունեցած դեպքերն ու իրադարձությունները չընթացեցին հայկական աշխարհը:

Անցնող տարին լի էր ադրբեյջանա-դարաբաղյան հակամարտության սրացումներով: Ունեցանք անդաճալի կորուստներ, արձանագրեցինք հաջողություններ: Հաջողություններ, որոնք ես մեկ անգամ դաս եղան հակառակորդին՝ ապացուցելով մեր ոգու, մեր կամքի անպարտելիությունը:

2015 թվականին միջազգային տարբեր հարթակներում զգալի աշխատանք տարվեց ԼՂՀ միջազգային ճանաչման ուղղությամբ:

2015 թվականը, ինչքան էլ դժվար, բայց եւ պատասխանատվությամբ է ամփոփում արցախցին:

2016-ը հայ ժողովրդի համար սթափության, պատասխանատվության, ոգեշնչման նոր փուլի մեկնարկի ազդարարն է լինելու:

Միտելի հայրենակիցներ, շնորհավորելով Ձեր Նոր տարին եւ Սուրբ Ծնունդը, մաղթում ենք ձեզ խաղաղ եւ արժանապատիվ կյանք, հաջողու-

թյուններ ու նվաճումներ ձեր անձնական, ընտանեկան, գործնական կյանքում:

Թող հարատեւ լինի մեր ժողովրդի անկախությունը եւ պետականությունը. դա մեր բնականոն ապրելու գերճշտված բանաձևն է:

Արդեն 125 տարի՝ ամեն օր հայ ժողովրդի խնդիրներով ապրում եւ այդ խնդիրների կարգավորման շուրջ պայքարում է ձեր հին եւ հավատարիմ ընկերը՝ Հայ Յեղափոխական Դաշնակցությունը:

**Շնորհավոր Ամանոր եւ Սուրբ Ծնունդ**

### ՀՀ 125 ամյակի տոնակատարություն Արցախում

Դեկտեմբերի 19-ին Ստեփանակերտի մշակույթի եւ երիտասարդության պալատում տեղի է ունեցել ՀՀ Կրթության կառույցի կողմից կազմակերպված՝ ՀՀ 125 ամյակին նվիրված հանդիսավոր միջոցառումը:

Միջոցառմանը ներկա էին Հայ Յեղափոխական Դաշնակցության Բյուրոյի քաղաքական ներկայացուցիչ Արմեն Ռուստամյանը, ՀՀ Գերագույն մարմնի ներկայացուցիչ Աղվան Վարդանյանը, ՀՀ Կրթության ԿԿ ներկայացուցիչ, ՀՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության ղեկավար Դավիթ Իշխանյանը, ԼՂՀ ԱԺ նախագահ Աշոտ Ղուլյանը, ՀՀ Կրթության ԿԿ անդամ, ԼՂՀ ԱԺ փոխնախագահ Վահրամ Բալայանը, ԼՂՀ քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներ, ԱԺ պատգամավորներ, բարձրաստիճան պաշտոնյաներ, կուսակցական ընկերներ եւ այլք:

Միջոցառումը բացվել է ԼՂՀ եւ ՀՀ օրհներգերով: Այնուհետեւ մեկ րոպե լռությամբ ներկաները հարգել են Արցախյան պատերազմում եւ Արցախի

սահմանի պաշտպանության համար նահատակված զինվորների հիշատակը:

Ելույթով հանդես է եկել ՀՀ Կրթության Կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչ, ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության ղեկավար Դավիթ Իշխանյանը:

«ՀՀ 125 ամյակի տոնակատարությունների շարքն աշխարհի տարբեր երկրներում շարունակվում է: Տոնակատարություններն ամեն տեղ նույն նախնական դեպքն են: Նույնն են ՀՀ անցած ուղու գնահատականները, նաեւ նրա առջեւ ծառայած մարտահրավերներն ու դրանց լուծման ուղիները, բայց կարեւոր ընդհանրությունն այն է, որ Դաշնակցության աշխարհասփյուռ եւ ապակենտրոն կառույցի համար կա մեկ կետ. դա Հայաստանն է ու հայ ժողովուրդը: Կա մի անփոփոխ կարգախոս՝ ամեն ինչ հանուն Հայաստանի ու հայ ժողովրդի»,- նշել է Դ. Իշխանյանը եւ շեշտել, որ կուսակցությունն իր ծնունդից առ այսօր գործել ու գործում է հանունի գաղափարով

ու փիլիսոփայությամբ:

«Մեր ժողովրդի առջեւ ծառայող տնտեսական ու սոցիալական հիմնախնդիրները մեզ թելադրում են ցուցաբերել քաղաքական ուժերի գերլարում, համախմբում եւ կենտրոնացում: Դաշնակցության ընկերվարությունն ու ներքին ժողովրդավարությունը բավարար նախադրյալներ են ստեղծել այդ առումով: Մեր անվտանգությունն ու պաշտպանությունը չի սահմանազատվում միայն Արցախով: Արցախի պետական սահմանով է անցնում հայ ժողովրդի այսօրն ու վաղը, ներկան ու ապագան: Արցախի շաղախով է պայմանավորված հայ ժողովրդի վերջին 30 տարիների առօրյան: Այդ շաղախի մեջ է նաեւ Հայ Յեղափոխական Դաշնակցությունը: Մենք 125 տարեկան ենք՝ իմաստության ու խոհեմության լուրջ կապիտալով, գաղափարական ու քաղաքական մեծ փորձառությամբ, կառույցային ու կազմակերպական ավանդույթներով, ներկայի ու ապագայի նկատմամբ ամուր վստահությամբ:

### ՀՅԴ 125 ամյակի տոնակատարություն Արցախում

1 ← Մենք 125 տարեկան ենք ոչ թե բարձրաճանելու եւ ի ցույց դնելու մեր կատարածը, այլ, ինչպես եւ անցյալում, համեստությամբ ու պատրաստակամությամբ ծառայելու մեր ժողովրդին, իսկ եթե հարկ լինի՝ նաեւ զոհաբերվելու»,-ասել է Դավիթ Իշխանյանը:

ՀՅԴ 125 ամյակի կապակցությամբ շնորհավորական խոսքով հանդես է եկել ԼՂՀ ԱԺ նախագահ, Արցախի ժողովրդավարական կուսակցության ղեկավար Աշոտ Ղուլյանը: Նա արժեւորել է ՀՅԴ հաշնակցության 125 տարիների հայանպաստ գործունեությունը եւ նշել, որ այսօր էլ կուսակցությունը շարունակում է իր նույն ուղին: «Այսօր էլ ՀՅԴ Արցախի կառույցը մեր ազդեցիկ ու ամենակազմակերպված ուժերից մեկն է: ՀՅԴ հաշնակցության մասնակցությունն Արցախի պետական կյանքին միշտ էլ նկատելի է եղել: Երկրի խորհրդարանում «Դաշնակցություն» խմբակցության հետ համագործակցությունը նախորդ տարիներին էլ աչքի է ընկել արդյունավետությամբ, եւ վստահ ենք՝ այդ մթնոլորտը թույլ է տալու լուծումներ գտնել բազմաթիվ հրատապ հիմնախնդիրների համար: Արցախի Հանրապետության իշխանությունների եւ մեր կուսակցության անունից շնորհավորելով ՀՅԴ 125 ամյակը՝ մաղթում եմ քաղաքական ձեռքբերումներ՝ ի շահ Հայաստանի եւ Արցախի հզորացման»,- ասել է Աշոտ Ղուլյանը:

Ելույթով հանդես է եկել նաեւ ԼՂՀ ԱԺ «Հայրենիք» խմբակցության ղեկավար Արթուր Թովմասյանը, ով կարեւորել է Դաշնակցության ղեկավարությունը հայոց պատմության վճռորոշ ժամանակահատվածներում եւ նշել, որ այն պատ-

վով է կրում «Հայկական ավանդական կուսակցություն» տիտղոսը:

«Մեկ դար, 25 տարի քաղաքական ու գաղափարական նշանակալից ճանապարհ անցած կուսակցությունն այդ տարիների ընթացքում բազմիցս փաստել է, որ վճռական անելիք ու ասելիք ունի՝ հանուն միասնական հայրենիքի վերականգնման»,- ասել է նա եւ շեշտել նաեւ Դաշնակցության ընդգրկում մասնակցու-

կուսակցությունը չէ. «ՀՅԴ-ն մի կազմակերպություն է, որ ելել է հայ ժողովրդի ծոցից, հայ ժողովրդի պահանջով ձեւավորվել է պիտի գոյատևի այնքան, քանի մեր ազգային խնդիրները չեն լուծվել...»

Հավատի եւ գործի համատեղումը եղել է Դաշնակցության սուրբ պարտականությունը, եւ բոլոր այն դեպքերում, երբ մենք հաջողել ենք, հաջողել ենք, որովհետեւ կարողացել ենք համատեղել մեր հա-



թյունն Արցախյան շարժման ու պատերազմի տարիներին, Յեղասպանության ճանաչման եւ դատապարտման, հայրենիք-սփյուռք կուռ կապի ստեղծման գործում:

ՀՅԴ Բյուրոյի քաղաքական ներկայացուցիչ Արմեն Ռուստամյանը ողջունել է ներկաներին, շնորհավորել ՀՅԴ-125 ամյակի կապակցությամբ եւ նշել, որ Դաշնակցությունը միայն դաշնակցականների

վատն ու գործը: Այդ հավատի եւ գործի համատեղումն ու միավորումն էր, որ ծնեց Դաշնակցություն կուսակցությունը՝ հասկանալով, որ պետք է հավատալ սեփական ուժերին, այդ հավատն ունենալ եւ լծվել գործին: Այդ հավատն ու գործը միավորվեցին եւ ստեղծեցին Հայաստանի Առաջին Հանրապետությունը, որը շատ-շատերը հեռու երագ էին համարում: Այդ հավատն ու գործն էր, որ մղեց նույն նվիր-

յալներին՝ հասկանալու, որ երբ հայրենիքից հեռու ես, երբ հայրենիքը բոլորովին այլ կարգավիճակի մեջ է, ամբողջ աշխարհով ցրված հայության թիվ մեկ խնդիրը հային հայ պահելն է, հայապահպանության խնդիրը լուծելն է եւ անկախության մեր երագանքների գաղափարը, մեր պատկերացրած Հայաստանի երագանքը վառ պահելն է:

Հավատն ու գործն ապահովեցին անկախ Հայաստան, ազատագրված Արցախ: Այսօր նույն հավատն ու գործն են, որ մեր սահմանի վրա կանգնած զինվորների պահում են»,- նշել է Ա. Ռուստամյանը եւ շեշտել. «Մեր բոլոր իղծերի եւ նպատակների նկատմամբ անսասան հավատք է պետք, նորից ու նորից ուժերի համախմբում: Ես վստահ եմ՝ որտեղ կա հավատի եւ գործի միավորում, այնտեղ կա Դաշնակցություն, այնտեղ կա հայ ազգի միասնականություն: Եվ ուրեմն, կեցցե այդ նույն հավատով եւ գործով միավորված հայ ժողովուրդը, կեցցե ազատ Արցախը, անկախ Հայաստանը, հայկական Սփյուռքը եւ դրան նվիրված Հայ Յեղափոխական Դաշնակցությունը»:

Ելույթներին հաջորդել է ՀՅԴ 125 ամյակին նվիրված ֆիլմի ցուցադրությունը:

Այնուհետեւ կայացել է «ՀՅԴ հաշնակցությունը 125 տարեկան է» խորագրով ստեղծագործական աշխատանքների մրցույթի մրցանակաբաշխությունը:

ՀՅԴ 125 ամյակին նվիրված տոնակատարությունը եզրափակվել է համերգային ծրագրով, որի ժամանակ հանդես է եկել «Մենք ենք մեր սարերը» երգի, պարի պետական համույթը:

«ԱՊՍՈՍԺ»

### ՀՅԴ Արցախի ԿԿ ներկայացուցիչն ամփոփել է անցնող՝ 2015 թվականը

- Ավարտին է մոտենում 2015 թվականը: Ինչպիսի՞նն էր այն Արցախի համար, ի՞նչ հաջողություններ ու ձախողումներ ունեցանք:

- 2014 թվականի ավարտին ես նման հարցադրում եղավ: Այն ժամանակ ես նշեցի, որ 2015 թվականը լինելու է բավականին ծանր տարի: Իրոք, այդ զգացումը անցնող տարվա բոլոր քաղաքական զարգացումներում, երկրի ներքին կյանքում, արտաքին ճակատում ուղեկցում էր մեզ:

Տարածաշրջանային եւ աշխարհաքաղաքական զարգացումները մեզ լուրջ անհանգստության տեղիք էին տալիս 2015-ին: Մենք տեսանք, որ կարող էինք ավելի վատ եզրահանգում, ավելի վատ սցենար ունենալ, բայց, այդուհանդերձ, կարողացանք պահպանել հարաբերական խաղաղությունը: Սա ամենամեծ հաջողությունն է թերեւս: Պատահական չէ, որ մայիսին կայացած խորհրդարանական ընտրություններում մենք ընտրեցինք «Խաղաղություն, արդարություն, աշխատանք» կարգախոսը: Այդ կարգախոսը հենց արտացոլում է մեր կյանքը, առօրյան, տալիս որոշ ուղղություններ: Կարելի էր ձեռքբերում եմ համարում նաեւ երկրի ներքին կյանքում արմատավորված եւ շարունակվող քաղաքական համախոհության մթնոլորտը: Հատկապես ընդգծելի է, որ Արցախի հիմնահարցի, ժողովրդի անվտանգության եւ պաշտպանության բոլոր հարցերում առկա է քաղաքական ուժերի համերաշխության մթնոլորտ:

Ինչ վերաբերում է ձախողումներին, ապա ավելի ճիշտ կլիներ որակել եւ անվանել անհաջողություններ: Մեզ չհաջողվեց սահմանին խուսափել մարդկային զոհերից: Մեր առօրյա կյանքի բոլոր հաջողությունների կողքին նման դեպքերը ստեղծում են հոգեբանական ծանր իրավիճակներ:

- 2015 թվականը լի էր բազում քաղաքական զարգացումներով: Ի՞նչ եք կարծում՝ որը պիտի լինի 2016 թվականի Արցախի ամենազխավոր քաղաքական խնդիրը:

- Երբ խոսում ենք Արցախի համար կարելի քաղաքական խնդիրներից, դժվար է առանձնացնել արտաքին կամ ներքին ճակատի մի որեւէ խնդիր եւ այն դիտել որպես գլխավոր, որովհետեւ բոլոր խն-

դիրները մարտահրավերներ: Քաղաքական գործընթացի սրնթաց զարգացումները նույնիսկ վերլուծաբաններին են շփոթեցրել: Արցախի համար կան մի քանի կարեւոր հարցեր՝ դարաբաղյան հիմնախնդրի վերջնական հանգուցալուծում եւ տնտեսական կայուն առաջընթացի ապահովում, ժողովրդագրական վիճակի բարելավում, պաշտպանական համակարգի ամրապնդում:



դիրներն այնքան են փոխկապակցված, որ սահմանազատել ճիշտ չէր լինի: Դարաբաղյան հիմնահարց, բանակցային գործընթաց, Արցախի միջազգային ճանաչում, երկրի ներքին կյանքի բարելավում, տնտեսական կայուն զարգացում, սրանք այն կարեւոր բաղադրիչներից են, որոնք ուղղակիորեն փոխկապակցված են իրար:

2016թ. մեզ համար հրեւյանական տարի է. սեպտեմբերին տոնելու ենք մեր անկախության 25 ամյակը: Հրեւյանական այս տարում ստիպված ենք լինելու

- Սահմանային իրավիճակը շարունակում է մնալ լարված, ավելին՝ «հրադարի ռեժիմի խախտումներ» եզրույթը սկսվում է փոխարինվել հաճախակի գործածական դարձած «պատերազմ» եզրույթով: Ինչպե՞ս կգնահատեք 2015 թվականին դարաբաղա-ադրբեջանական սահմանային իրավիճակը:

- 1994 թ. ստորագրված զինադադարի փաստաթղթով մենք խաղաղության հասնելու հիմքերն ենք դրել: Պատերազմն ինքնին շարունակվում էր իր տարբեր դրսեւորումներով՝ տեղեկատվական ու տն-

տեսական ոլորտներում, հրադարարի ռեժիմի խախտումներով, սահմանային կրկնվող բախումներով, դիվերսիոն գործողություններով, վերջերս արդեն՝ ծանր հրետանու եւ նոր զինատեսակների օգտագործման փորձերով: Այս զարգացումները մեզ հուշում են՝ ավելի լուրջ քայլեր ձեռնարկելու անհրաժեշտության մասին: Կարծում եմ՝ իրավիճակի շտկման առումով շատ անելիքներ ունենք 2016-ին՝ օգտագործելով ոչ միայն մեր ներքին, այլեւ՝ արտաքին ռեսուրսները: Արտաքին ռեսուրսներ ասելով՝ նկատի ունեմ հատկապես միջազգային կառույցների դերակատարությունը:

2015-ին եւ նրան նախորդած տարիներին միջազգային կառույցների կողմից օգտագործվում էր երկակի ստանդարտներ, չկար իրական գնահատական: Այդ առումով անելիքները ոչ միայն միջազգային ուժերի կողմից իրավիճակին ճիշտ գնահատական տալուն հասնելն է, այլեւ պահանջը գործնական քայլերի իրականացման:

- Ինչպիսի՞նն էր 2015 թվականի խորհրդարանական տարին, ի՞նչ ձեռքբերումներ ունեցավ Արցախի խորհրդարանը:

- Արդեն իսկ արհեստավարժ ու մշտական հիմունքներով գործող խորհրդարանի գործունեությամբ նոր փուլի սկիզբ դրվեց: Թեւեւ ընդամենը 6-7 ամսվա գործունեություն է ամփոփված 6-րդ գումարման խորհրդարանի աշխատանքներում, այդուհանդերձ, պետք է շեշտեմ, որ բավականին կարեւոր էին խորհրդարանի՝ այս տարվա կատարած աշխատանքները: Խորհրդարանի գործունեությունն ամփոփվեց մի շարք օրենսդրական ակտերի ընդունմամբ, խորհրդարանական դիվանագիտության ընդլայնմամբ, ինչպես նաեւ հասարակության հետ անմիջական կապի ապահովմամբ:

### ՀՀ Արցախի ԿԿ ներկայացուցիչն ամփոփել է անցնող՝ 2015 թվականը

2 ← Ընդգծելի է 2 կարևոր փաստ՝ խորհրդարանի կողմից հաստատված կառուցվածքային փոփոխությունների փաթեթի ընդունումը, որով սկիզբ դրվեց պետական կառավարման համակարգի լավարկման գործընթացին եւ ԱԺ բոլոր խմբակցությունների ներկայացուցիչների հաճախակի այցերն առաջնագիծ եւ սահմանային համայնքներ՝ իրավիճակին անմիջական ծանոթանալու եւ զինվորի կողքին գտնվելու նկատառումներով:

Խորհրդարանի գործունեությունը հատկանշվեց նաեւ խորհրդարանական դիվանագիտության շրջանակների ընդլայնմամբ: Ծատ կարեւոր էր հատկապես ՀՀ-ի կառույցի հրավերով ֆրանսիայի խորհրդարանի իշխող սոցիալիստական կուսակցության պատվիրակության այցելությունն Արցախ եւ նրանց անմիջական իրազեկումն Արցախի խնդրին ու առջային:

Կարեւոր էր Բելգիայի եւ Հոլանդիայի խորհրդարանականների այցելությունները, ինչպես նաեւ «ֆրանսիական օրեր Արցախում» ծրագրի իրականացումը: Այս 6-7 ամիսների ժամանակահատվածը մեզ միաժամանակ հուշում է, որ բավականին լուրջ անելիքներ կան դեռ՝ թե՛ խորհրդարանի ներսում, թե՛ խորհրդարանից դուրս՝ արտաքին ճակատում:

- Արցախում այսօր արդեն խոսում են սահմանադրական բարեփոխումների անցկացման մասին: Ի՞նչ էք կարծում՝ 2016-ին որքանով է հնարավոր սահմանադրական բարեփոխումների հանրաքվեի անցկացումը, եւ արդյո՞ք մեր քաղաքական ու հասարակական դաշտը պատրաստ է այդ փոփոխություններին:

- Կա մի պարզ ճշմարտություն. ցանկացած քաղաքական նոր գործընթացի համար քաղաքական ու հասարակական դաշտի պատրաստ կամ ոչ պատրաստ լինելը կախված է այդ դաշտի ինքնագիտակցության մակարդակից: Իսկ սահմանադրական բարեփոխումները քաղաքական մի նոր գործընթաց է:

Բայց կա մի ուրիշ հանգամանք եւս. սահմանադրական փոփոխությունները Հայաստանում այլեւս քննարկման նյութ չեն, այլ՝ փաստ: Տարբեր շրջանակների կողմից փորձ է արվում այս ամենից Արցախը հեռու պահել, բայց պետք է ճիշտ գնահատել իրականությունը եւ գիտակցել, որ Արցախը չի կարող հեռու մնալ ՀՀ պետական կառավարման համակարգի մեջ տեղի ունեցած այդ փոփոխություններից: Այդ բարեփոխումներն Արցախում անխուսափելի են, եւ կարծում եմ, որ քաղաքական ուժերը պետք է ուղղակիորեն ներգրավվեն այդ գործընթացում: Խորհր-

դարանական համակարգին անցնելն ինքն եւթադրում է նաեւ 100 տոկոսանոց համամասնական ընտրակարգի անցում. մի բան, ինչի արդյունավետությունը միշտ պնդում էր ՀՀ Դաշնակցությունը:

Սահմանադրական բարեփոխումների մեկնարկը կարելի է ասել, որ արդեն տրված է: Արդեն իսկ խորհրդարանում ներգրավված առաջատար 3 քաղաքական ուժերի ներկայացուցիչները բարձրաձայնել են Արցախում դրանց անխուսափելիության մասին: Բայց այստեղ կարեւոր են թե ընդհանուր քննարկումները եւ թե մոտեցումները: Ինքնին՝ ՀՀ-ում կատարված բարեփոխումները որպես հիմք ընդունելը ճիշտ է, բայց մյուս կողմից նաեւ պետք է հաշվի առնվեն Արցախի առանձնահատկություններն իր ամբողջական համատեքստով: Ինչեւէ, սրանք առաջիկայի հարցեր են, ինչու՞ չէ նաեւ քաղաքական խորհրդատվությունների ու քննարկումների նյութ:

Ինչ վերաբերում է հանրաքվեին, ապա պետք է նկատի առնել, որ 2017թ. Արցախում հերթական նախագահական ընտրություններն են. կլինե՞ն դրանք, թե՞ ոչ, կամ՝ ինչ ձեւաչափով հարցերի պատասխանները, կարծում եմ, կստանանք 2016-ին:

- Անցնող տարին նշանավորվեց նաեւ

**ՀՀ Դաշնակցության 125-ամյա տարեդարձով: Որո՞նք են լինելու Դաշնակցության՝ 2016 թվականի գլխավոր անելիքները:**

- Մեր ժողովրդի ու պետականության առջեւ ծառայած բոլոր հիմնախնդիրները Դաշնակցության համար կարող ենք համարել գլխավոր խնդիրներ: Չի կարող Դաշնակցությունն իր համար ճշտել գլխավոր այլ ուղղություններ՝ հաշվի չառնելով հայ ժողովրդի համար ներկա մարտահրավերները՝ լինի դա քաղաքական կամ տնտեսական, ներքին կամ արտաքին կյանքին առնչվող: Բայց կուզեի առանձնացնել գոնե մի քանիսը՝ Արցախյան հիմնախնդրի հանգուցալուծում, Հայաստանի Հանրապետության հզորացում, Ցեղասպանության միջազգային ճանաչում եւ հատուցում:

ՀՀ-ն անելիքները շատ են: Կարծում եմ՝ Դաշնակցությունը միշտ էլ իր վրա կրել է մեծ պատասխանատվություն: Ակնկալում եմ, որ 2016-ին եւ հաջորդ տարիներին մեր ժողովուրդը կօգտագործի բոլոր առիթները Դաշնակցությանը նոր վստահության պատասխանատվության տակ դնելու, քննականաբար՝ ակնկալելով նրանից ավելի գործնական արդյունքներ:

Հերմինե ԱՎԱԳՅԱՆ

### Հայաստանը եւ Արցախը իրական պատերազմի մեջ են. Արմեն Ռուստամյան

*Նախօրեին Արցախում էր ՀՀ Դաշնակցության Բյուրոյի քաղաքական ներկայացուցիչ Արմեն Ռուստամյանը: Արցախյան հիմնախնդրի շուրջ տեղի ունեցող զարգացումների եւ ներկա մարտահրավերների շուրջ «Ապառաժ»-ի թղթակիցը զրուցել է Ա. Ռուստամյանի հետ:*

- Դարաբաղա-ադրբեջանական սահմանին վիճակը շարունակվում է մնալ լարված, ՀՀ եւ Ադրբեջանի նախագահների հանդիպումից հետո էլ ինտենսիվ կրակոցները սահմանի ողջ երկայնքով շարունակվում են: Ինչպե՞ս կգնահատեք ադրբեջանա-դարաբաղյան հակամարտության ներկա իրավիճակը:

- Նախ՝ պետք է արձանագրել, որ այսօր սահմանին ոչ թե հրադադարի ռեժիմի խախտումներ են սուս, այլ, ըստ էության, տեղի է ունենում չհայտարարված պատերազմ, որովհետեւ այն ինտենսիվությունը, որը մենք նկատում ենք հրադադարի խախտումների առումով, եւ հայ զինվորների կորուստները, որոնց մասին գրեթե միշտ լսում ենք, խոսում են ամբողջ բաժանարար գծի երկայնքով սկսված ռազմական գործողությունների մասին:

Ներկա իրավիճակն ունի մի քանի պատճառներ: Նախ, չեմ բացառում, որ վերջին սրացումները կապ ունեն Թուրքիայի հետ, որովհետեւ այն լարվածությունը, որն առաջացել է ռուս-թուրքական հարաբերություններում, Դավությանի հանպատրաստից այցը Բաքու, որից հետո դարաբաղա-ադրբեջանական սահմանային լարվածությունը նոր թափ սկսեց ստանալ, խոսում են այն մասին, որ Թուրքիան որոշել է ասիմետրիկ հարվածով կանխարգելել Ռուսաստանի հնարավոր հարվածներն իր նկատմամբ, ուշադրություն շեղել իրե-

նից: Սա մի բացատրություն է, իսկ ընդհանուր ֆոնը, որը միշտ գոյություն է ունեցել, պայմանավորված է այն հանգամանքով, որ Ադրբեջանը, ըստ էության, չի ուզում խաղաղ բանակցությունների գործընթացը շարունակել: Նա այդ մասին բացեիբաց չի հայտարարում, բայց իրականում փորձում է հարցը լուծել իրեն հատուկ՝ ուժային մեթոդներով,



պատերազմ իրահրելով՝ փորձելով այդ կերպ բանակցությունների վրա ազդել:

Բացի դրանից, ստեղծված իրավիճակին նպաստում են միջազգային կառույցներում, մասնավորապես ԵԽԽՎ-ում տեղի ունեցող զարգացումները: Այստեղ պատրաստվում է ընդունվել հակահայկական բանաձեւ, ինչը չափազանց ոգեւորել է Ադրբեջանին: Այդ բանաձեւը ոչ միայն միակողմանի է, այլ, կարելի է ասել, մեղի մեջլիսի հայտարարություն է, որովհետեւ ամբողջությամբ արտահայտում է Ադրբեջանի մոտեցումները՝ հիմնախնդրի կարգավորման հետ կապված: Բնականաբար, եթե ԵԽԽՎ-ն ընդունի դա, կդառնա Ադրբեջանի հա-

կահայկական քարոզչության ձեռքում որպես գործիք: Սա ակնհայտ մարտահրավեր է, եւ պետք է ամեն ինչ անել, որպեսզի դա կանխվի:

Այն լոբբինգը, որն Ադրբեջանի իրականացնում է՝ օգտագործելով իր նավթադոլարները, Եվրոպայի խորհուրդը վեր են ածել այնպիսի մի հարթակի, որտեղ Ադրբեջանը թելադրում է իր կամքը:

**- Ի՞նչ մեթոդներ պետք է կիրառել նման զեկույցների ընդունումը կանխելու եւ ընդհանրապես ադրբեջանական լոբբինգին հակադարձելու համար:**

- Մենք զուգահեռ երկու բան պետք է անենք: Առաջին հերթին՝ ինքներս գիտակցենք, որ իրականում գտնվում ենք պատերազմական իրավիճակում: Պարզ խոսքով ասած՝ մենք պետք է գործենք ռազմական դրությանը համապատասխան ռեժիմով: Սա նշանակում է՝ մաքսիմալ մոբիլիզացիա մեր ներսում, որպեսզի մեր պաշտպանվածությունն ինքներս ապահովենք: Բոլոր նրանք, ովքեր չեն հասկացել այս վտանգը, պետք է գիտակցեն, որ իրականում պատերազ-

մի մեջ են եւ Արցախը, եւ Հայաստանը: Բոլոր մնացած հարցերը, որոնք կարող են մեր ներսում տարաձայնություններ ու պառակտումներ առաջացնել, պետք է մի կողմ դրվեն, եւ հասկանանք, որ ունենք մեկ ընդհանուր գործ՝ պաշտպանել մեր սահմանները եւ այն ձեռքբերումները, որոնք ունեցել ենք անկախության վերջին տարիներին:

Երկրորդ՝ մենք պետք է բարեփոխենք մեր ներքաղաքական կյանքը, դարձնենք մեր երկիրն ավելի հզոր՝ ժողովրդավարությամբ, մարդու իրավունքների, արդարության սկզբունքների պահպանմամբ: Այդ գործընթացը Հայաստանում արդեն սկսվել է՝ կապված նոր Սահմանադրության ընդունման հետ: Այդ ամենը պետք է արագ թափով, լուրջ ծրագրերով իրականացվի, որ օր առաջ այսօրվա մեր դե ֆակտո իրավիճակը համապատասխանեցնենք դե յուրե՝ արդեն գործող սահմանադրական կարգին:

Միս ու արյուն պետք է տրվի այն Սահմանադրությանը, որը լավ նախադրյալներ է ստեղծում երկրում արդյունավետ կառավարում իրականացնելու համար: Մենք պետք է լավ հասկանանք, որ մեր հույսը պիտի դնենք մեր ուժերի վրա, մեր ողջ ռեսուրսը մեր ձեռքով ստեղծելու վրա:

Ստեղծված նոր աշխարհաքաղաքական իրավիճակը պահանջում է արտաքին քաղաքականության ոլորտում նոր ռազմավարության իրականացում, որպեսզի չկրկնենք անցյալի պատմության դառն դասերը: Ես պարզ խոսքով ասում եմ՝ մեր 42 հազար քառակուսի կիլոմետրը մենք ըստ արժանվույն, ի շահ մեր նպատակների եւ ինքնաբավության մակարդակի բարձրացման չենք կարողացել օգտագործել: Պետք է հենվենք մեր ներուժին եւ ամրանանք:

Հ. ԱՎԱԳՅԱՆ

### ԼՂՀ ԱԺ-ն հաստատել է 2016թ. պետական բյուջեն

Դեկտեմբերի 23-ին տեղի է ունեցել ԼՂՀ Ազգային ժողովի հերթական լիազուստ նիստը՝ ԱԺ նախագահ Ա. Ղուլյանի գլխավորությամբ:

Ներկաները նիստը սկսել են Արցախի Հանրապետության սահմանի պաշտպանության ժամանակ վերջին օրերին նահատակված զինվորների հիշատակը մեկ րոպե լուռությամբ հարգելով:

Նիստի առանցքային կետը «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի նախագիծն էր: Այդ մասին զեկույցով հանդես է եկել ԼՂՀ ֆինանսների նախարար Սպարտակ Թեոսյանը, ապա Ազգային ժողովի խմբակցությունների ղեկավարները ներկայացրել են նախագծի մասին իրենց տեսակետները:

ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության տեսակետը ներկայացրել է խմբակցության ղեկավար Դավիթ Իշխանյանը, ով իր ելույթում նշել է.

«Հարգելի գործընկերներ,

ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցությունն անցած տարիների պետական բյուջեի նախագծերի ուսումնասիրման ելքն արկածային ժամանակ խիստ կարելի էր տվյալ բյուջեի նախագծում ռազմավարական ուղղությունները:

Ի սկզբանե նշենք, որ 2016թ. պետական բյուջեի նախագիծը բխում է ԱԺ-ի կողմից հաստատված 2015-17թթ. կառավարության գործունեության եւ 2016-18թթ. միջնաժամկետ ծրագրերի դրույթներին:

«Դաշնակցություն» խմբակցությունը եւ խմբակցության պատգամավորներն առանձին ավելի քան երեք տասնյակ առաջարկություններ են ներկայացրել կառավարությանը, հանդիպել գործադիր իշխանության ներկայացուցիչներին:

Մեր առաջարկությունները վերաբերում էին տարբեր ոլորտների՝ բնակչության անվտանգության, ռազմավարական պաշարների, քաղաքացիական պաշտպանության, տարածքային համաչափ զարգացման, դիվերսիֆիկացված

տնտեսության, գյուղի եւ գյուղատնտեսության, ժողովրդագրական վիճակի, բնապահպանության, սոցիալական եւ առողջապահության, կրթության եւ արտաքին ոլորտի հիմնահարցներին:

Գնահատելի է, որ գործադիրը ներկատնտեսական ու ֆինանսական սուղ պայմաններում տրամադիր է հեռանկարային նոր ծրագրեր կյանքի կոչելուն, որում տեղ է գտել նաեւ Դաշնակցության մի շարք առաջարկներ: Հատկապես շեշտելի է հա-



մաչափ զարգացման ուղղված միջոցները եւ գյուղի ու գյուղատնտեսության նկատմամբ նոր մոտեցումները:

Նախորդ տարիներին «Դաշնակցություն» խմբակցության տված գնահատականների մեջ միշտ առկա էր բյուջեի ռիսկայնության գնահատականը, հատկապես՝ բյուջեի պակասորդի առումով: 2016թ. պետական բյուջեն, մեր կարծիքով, առավել իրատեսական է, իր մեջ քիչ ռիսկեր պարունակող. նկատի ունենք նախորդ տարիների համեմատությամբ նվազ պակասորդի նախատեսումը: Ուշուներին է կառավարության կողմից մեր առաջարկի հաշվի առնելը:

Մտահոգիչ է կապիտալ շինարարության ոլորտում ընդհանուր ծավալների նվազ լինելը, որն ուղեկցվում է թեկուզ եւ

ժամանակավոր, բայց՝ աշխատատեղերի կրճատմամբ: Մենք գտնում ենք, որ տնտեսության այն ոլորտները, որոնք որ հնարավորություն են տալիս զբաղվածության մեծ աստիճան ապահովել, նպատակահարմար է դրանց ուղղված ֆինանսական միջոցները տարեցտարի համաչափ ավելացնել:

Ինչ վերաբերում է բյուջեի ուղղվածությանը, գործադիրի կողմից այն որակվել է որպես սոցիալական ուղղվածության

մեկտեղման ու կառավարության հետ համախորհուրդ քայլերի ձեռնարկմանը:

Առավել արդյունավետ ու նպատակային բյուջե ունենալու համար, ինչպես նաեւ հաշվի առնելով մշտական հիմունքներով գործող խորհրդարանի կարգավիճակը, առաջարկում ենք՝ 2017 թ. եւ հաջորդող տարիների պետական բյուջեների նախագծերի ձեւավորման գործընթացում նախապես ներգրավել խորհրդարանական խմբակցություններին՝ նախապատասխան աշխատանքներն սկսելով յուրաքանչյուր տարվա ապրիլ-մայիս ամիսներին:

Հաշվի առնելով վերոնշյալը, ինչպես նաեւ երկրի առջեւ ծառայած մարտահրավերներն ու դրանց հանգուցալուծման կարելիությունը՝ «Դաշնակցություն» խմբակցությունը 2016 թ. պետական բյուջեի նախագիծն քվեարկելու է կողմ:

«Հայրենիք» եւ «Ժողովրդավարություն» խմբակցությունները դրական տեսակետ են ներկայացրել 2016 թ. բյուջեի նախագծի վերաբերյալ՝ նշելով, որ կողմ են քվեարկելու նախագծի ընդունմանը:

«Վերածնունդ» խմբակցության ղեկավար Հայկ Խանումյանը, ներկայացնելով խմբակցության տեսակետը, նշել է, որ դեմ է քվեարկելու օրենքի նախագիծն այն պատճառով, որ կցանկանար տեսնել առավելապես երկրի զարգացման ուղղված բյուջե, ինչը, ըստ պատգամավորի, արտահայտված է 2016 թվականի պետական բյուջեի այս նախագծում:

«Շարժում-88» խմբակցության պատգամավոր Էդուարդ Աղաբեկյանը ներկայացրել է խմբակցության տեսակետը եւ նշել, որ խմբակցության պատգամավորները դեմ են քվեարկելու նախագծին:

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի նախագիծը հանձնվել է պատգամավորների քվեարկությանը, որի արդյունքում՝ 29 կողմ, 4 դեմ ձայներով բյուջեի հաստատման մասին օրենքն ընդունվել է:

«ԱՊՍՈՍԺ»

### Տեղի է ունեցել Արցախի ազգային վիճակախաղի հերթական խաղարկությունը



Դեկտեմբերի 28-ին, առավոտյան ժամը 10:00-ին Ստեփանակերտի «Վալեքս զարդեն» հյուրանոցի դահլիճում մեկնարկել էր Արցախի ազգային վիճակախաղի խաղարկությունը:

Խաղարկության կազմակերպման համար դահլիճում ներկա էր վիճակախաղի պատասխանատու հանձնաժողովը՝ 6 հոգուց բաղկացած կազմով, իսկ խաղարկությունն իրականացնելու համար հրավիրվել էին արցախցի դպրոցականներ:

Վիճակախաղի շահումային ֆոնդում ներառված էին միայն «Թողարկված է Արցախում» ապրանքանիշը կրող ար-

տադրատեսակներ՝ նպատակ ունենալով նպաստելու Արցախում փոքր եւ միջին ձեռնարկությունների զարգացմանը:

Տեղական արտադրանքի հետ մեկտեղ վիճակախաղը խրախուսում է նաեւ մշակութային արժեքների պահպանումը, Արցախում աշխատատեղերի ստեղծումը, արցախցու կողմից մշակված բարիքների ներկայացումը: Ռազմավարական ծրագրերի շարքում իր ուրույն տեղն ունեն նաեւ վերաբնակեցման ծրագիրը, որով Արցախի ազգային վիճակախաղը հայրենիքի շենացման գործում կույժեկ պատասխանատվության կոչ է անում:

«Շահում ես դու, շահում է երկիրը», «Վերաբնակեցումը հայրենիքը վերագտնելու միջոց է». այսպիսին են Արցախի ազգային վիճակախաղի կարգախոսները, որոնք կյանքի կոչմամբ Արցախի կառավարությունը նպատակ ունի համայն հայությանը համախմբելու մեկ կարելիոր նպատակի՝ Արցախի շենացման ու զարգացման շուրջ:

Ուղիղ երկու տարի առաջ դեկտեմբերի 28-ին կյանքի կոչված վիճակախաղի անցկացման օրը պատահական էր ընտրված, որովհետեւ ի կատարումն 1991 թ. դեկտեմբերի 10-ի Անկախության հանրաքվեի միջոցով ժողովրդի կամքի

արտահայտության՝ 1991 թ. հենց այդ օրն անց են կացվել ԼՂՀ պետական իշխանության բարձրագույն մարմնի՝ Գերագույն խորհրդի ժողովրդական պատգամավորների ընտրությունները: Դեկտեմբերի 28-ին լրացավ այդ կարելիոր պետական իրադարձության 24-րդ տարեդարձը:

Այս տարվա ընթացքում իրացված տոմսերի քանակը կազմել է 94 հազար 419, մարված տոմսերի քանակը՝ 45 հազար 551, շահումային ֆոնդը՝ 93 մլն 555 հազար դրամ, շահող տոմսերի քանակը՝ 455:

Սեփ. ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ



aparaj.am

### ԼՂՀ արտգործնախարարն ամփոփել է անցնող տարվա աշխատանքները

Դեկտեմբերի 25-ին կայացել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտաքին գործերի նախարար Կարեն Միրզոյանի մամուլի ասուլիսը, որի ժամանակ արտաքին գերատեսչության ղեկավարը հանդես է եկել տարեկան աշխատանքների ամփոփիչ ելույթով:

Նախարարության աշխատանքների գլխավոր ուղղությունները, ըստ նախարարի, եղել են Արցախի միջազգային ճանաչման, հիմնախնդրի խաղաղ կարգավորման, արտաքին հարաբերությունների, կապերի եւ համագործակցությունների ընդլայնման, միջազգային գործընթացներում ԼՂՀ ներգրավվածության ապահովմանն ուղղված աշխատանքները:

Բանակցային գործընթացի մասին խոսելով՝ նախարարն ընդգծել է, որ այս տարի այդ ասպարեզում իրական առաջընթաց չի եղել, որի պատճառները հայտնի են: Ադրբեջանի կողմից հրադարձի ռեժիմի մշտական խախտումները, բանակցային գործընթացի էությունը խեղաթյուրող հայտարարությունները, կարգավորմանն ուղղված առաջարկների մերժումը՝ բանակցային գործընթացը մղել են տապալման: Այդ առումով Կարեն Միրզոյանը կարեւորել է շփման գծում միջադեպերի հետաքննության մեխանիզմների անհապաղ մշակումն ու իրագործումը, ինչը թույլ կտա բացահայտել հրադարձի ռեժիմի իրական խախտողին:

ԵԱՀԿ Մինսկի խմբի կողմից, նախարարի փոխանցմամբ, անց է կացվել 17 դիտարկում, որոնց ժամանակ շատ անգամ ադրբեջանական կողմը թույլ չի տվել դիտորդներին մոտենալ առաջնագծին: Սա նախարարը որակել է Ադրբեջանի կողմից բացահայտ արհամարհանք:



ԵԱՀԿ Մինսկի խմբի նկատմամբ: Նախարարն ընդգծել է, որ չնայած Ադրբեջանի սեւ ցուցակում հայտնվելու սպառնալիքին՝ արտասահմանյան լրագրողների այցելություններն Արցախ չեն կրճատվել, ավելին՝ եթե նախորդ տարի նրանց թիվը 48 էր, ապա այս տարի թիվը 120 լրագրողներ են այցելել Արցախ, ինչ փաստում է, որ հետաքրքրությունն Արցախի հանդեպ սկսել է աճել: Կարեն Միրզոյանն անդրադարձել է

2016 թ. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ԱԳՆ-ի կողմից իրականացվելիք առաջնահերթություններին՝ նշելով, որ ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորումը եւ ԼՂՀ միջազգային ճանաչումը մնալու են Արցախի իշխանությունների ուշադրության կենտրոնում:

Դեկտեմբերի 25-ին տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ ԼՂՀ արտգործնախարարն անդրադարձել է նաեւ ԵսիւՎ հունվարյան նստաշրջանի օրակարգում ներառված Լեռնային Ղարաբաղի հանրապետությանը վերաբերող երկու հակահայկական զեկույցներին՝ Ռոբերտ Ուլթերի՝ «Բռնության եսկալացիան Լեռնային Ղարաբաղում եւ Ադրբեջանի այլ գրավյալ տարածքներում» եւ

Միլիցա Մարկովիչի «Ադրբեջանի սահմանամերձ շրջանների բնակիչները միտումնավոր զրկված են ջրից» Սարսանգի ջրամբարին վերաբերող զեկույցներին: Այդ մասին նախարարը նշել է. «Չնայած այդ բանաձեւերը չունեն պարտադրող բնույթ, սակայն ընդունվելու պարագայում կարող են բացասաբար ազդել ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացի վրա:

Ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության գոտում ավելի ու ավելի վտանգավոր բնույթ կրող լարվածության շարունակական սրման ֆոնին, Ադրբեջանի դիրքորոշմանը նպաստող տվյալ բանաձեւերի ընդունումը ոչ միայն ադրբեջանական իշխանություններին թույլ կտա հետագայում եւս հաշվի չնստել լարվածության նվազեցմանն ուղղված հայկական կողմերի եւ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների առաջարկությունների հետ, այլեւ կարող է ընկալվել ադրբեջանցիների կողմից որպես հակամարտությունը ուժի միջոցով լուծելու քարտ-բլանշ»:

Մամուլի ասուլիսի վերջում նախարարը պատասխանել է լրագրողների հարցերին: ԼՂՀ ԱԳՆ-ի գործունեության արդյունավետ լուսաբանման համար արցախյան եւ հայաստանյան որոշ լրատվամիջոցների ներկայացուցիչներ պարզեատրվել են շնորհակալագրերով:

Սեփ. ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

### ԼՂՀ Էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության վարչությունը հանդես է եկել տարեկան ամփոփիչ մամուլի ասուլիսով

Դեկտեմբերի 24-ին կայացել է ԼՂՀ Էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության վարչության տարեկան ամփոփիչ մամուլի ասուլիսը:

ԼՂՀ Էկոնոմիկայի փոխնախարար Սերգեյ Շահվերդյանի փոխանցմամբ՝ զբոսաշրջության բնագավառում, նախորդ տարվա համեմատ, այս տարի Արցախ այցելող զբոսաշրջիկների թվի առումով 13 տոկոս աճ է նկատվել:

Անցած տարի Արցախ էր այցելել 14 հազար 329 զբոսաշրջիկ, այս տարվա դեկտեմբերի 1-ի դրությամբ Արցախ այցելած զբոսաշրջիկների թիվը հասնում է 16 հազար 350-ի:

Սերգեյ Շահվերդյանի խոսքով՝ Արցախի զբոսաշրջային կյանքն աշխուժացնում են հատկապես հանրապետությունում կազմակերպվող փառատոները: «Էկոնոմիկայի նախարարության կողմից նախաձեռնած 2 փառատոները՝ գինու փառատոնը Տոդում եւ թթի փառատոնը Ամարասի վանքի շրջակայքում, զբոսաշրջիկների ներգրավվածություն են ապահովում», - նշել է փոխնախարարը:

Թեեւ այս տարի ոլորտի պատասխանատուները հնարավորություն չունեցան մասնակցելու միջազգային ցուցահանդեսների, սակայն առանձին տաղավարներով մասնակցել են Հայաստանում կազմակերպված մի շարք միջոցառումների, ինչպես նաեւ՝ Արցախի զբո-

սաշրջային ներուժը ներկայացվել է վերջերս Մոսկվայում կայացած «Արցախյան օրեր Մոսկվայում» փառատոնի ժամանակ:

Վարչությունը շարունակել է Տիգրանակերտի եւ Ազոխի քարանձավի հնագիտական պեղումների աշխատանքները: Արդյունավետ էին նաեւ Մարտա-



կերտի շրջանի Նոր Հայկաջուր համայնքի տարածքում դամբարաններից մեկի հնագիտական պեղումները: Վերջինիս վերաբերյալ փոխնախարարը շեշտել է. «Պեղումների արդյունքում հայտնաբերված հնագիտական նյութերը բացառիկ գեղագիտական եւ պատմական նշանակություն ունեն հայոց պատմագրության համար: Բացի նյութական, իրե-

ղեն գտածոներից, մենք հնագիտական պեղումների արդյունքում կարողացանք հերքել տարածված այն մոտեցումը, որ իբր թե հաչենագետի հովտում գտնվող դամբարանները պատկանում են սկյութական մշակույթին: Գտածոների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ դամբարանաբլուրները տեղական

մշակույթի դրսեւորում են: 2015 թվականին շարունակվել են նաեւ Զաշաթաղի շրջանի ուսումնասիրման աշխատանքները՝ ամբողջացնելու համար այդ շրջանի հուշարձանների պետական ցուցակները: Կազմվել են հուշարձանների վկայականներ: Երկու տարվա աշխատանքների շնորհիվ վերականգնվել են նաեւ Դադի-

վանքի 13-րդ դարի որմնակարները: Հատկանշական է մի կարեւոր փաստ. պետական բյուջեից հուշարձանների պահպանության ոլորտի հատկացումները նվազել են 40 տոկոսով, ինչը թեեւ խոչընդոտ է այդ ոլորտի ուսումնասիրության աշխատանքների համար, բայց եւ այնպես, վարչության աշխատակիցները լիաժույս են, որ մասնավոր միջոցների ներգրավման շնորհիվ իրենց կհաջողվի պահպանել ոլորտի զարգացման տեմպերը:

«Արեւելյան ժառանգության վերածնունդ» հիմնադրամի միջոցներով սկսվել է Մարտունու շրջանի Մուշկապատ գյուղի եկեղեցու վերականգնման աշխատանքները:

Նույն հիմնադրամի միջոցով պատվիրվել է Շուշիի պարսկական մզկիթի վերականգնման նախագծային փաստաթղթերի մշակումը, եւ հիմնադրամի կողմից ֆինանսավորման պարագայում սկսվելու են մզկիթի վերականգնման աշխատանքները:

«Մեր պետության ամբողջ մշակութային ժառանգությունը, անկախ կրոնական, էթնիկական ծագումից, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժողովրդի սեփականությունն է, ուստի՝ մենք պարտավոր ենք հոգ անել բոլոր հուշարձանների նկատմամբ», - ասել է Ս. Շահվերդյանը:

«ԱՊՍՈՍԺ»

### ՀՕՍ-ուհիներն այցելել են սահմանամերձ Թալիշ եւ Մատաղիս համայնքներ



Հայ օգնության միության Արցախի միավորը «Ապահով մանկություն սահմանամերձ գյուղերում» խորագիրը կրող ծրագրի շրջանակներում դեկտեմբերի 26-ին այցելել է Մարտակերտի շրջանի Մատաղիս եւ Թալիշ սահմանամերձ համայնքներ:

ՀՕՍ-ուհիներն այցելել են երկու համայնքների դպրոցներ ու մանկապարտեզներ եւ ծրագրի շրջանակներում հատկացված գումարով հաստատություններին անհրաժեշտ սվերներ փոխանցել:

Սվերները էլեկտրական սարքավորումների տեսքով էին՝ հեռուստացույց, երաժշտական կենտրոն, DVD եւ այլն, ինչպես նաեւ՝ գորգ եւ Արցախում արտադրվող, Էկոլոգիապես մաքուր, Woodpeckers ֆիրմայի փայտի խաղալիքներ:

Անհատական սվերներ են ստացել նաեւ Թալիշի եւ Մատաղիսի 1-4-րդ դասարանի աշակերտները:

Անհատական սվերները տրամադրել է գլենդելահայ 17-ամյա Աննիե Մաճարյանը, ով ամռանն առաջին անգամ այցելելով Արցախ՝ այնքան էր տպավորվել

արցախցի երեխաներով, որ տուն վերադառնալով՝ մի քանի արկղ սվերներ է պատրաստել եւ ուղարկել Արցախ:

ՀՕՍ-ի Արցախի միավորը, հետեւելով կառույցի՝ «Ժողովրդիս հետ, ժողովրդիս համար» կարգախոսին, անհրաժեշտություն է համարում սահմանամերձ գյուղերի աջակցության ծրագիրը:

ՀՕՍ-ի Արցախի միավորի ատենապետուհի Արմինե Հարությունյանը նշել է. «Սահմանամերձ գյուղերը մեր երկրի պետական սահմանը պահող գյուղերն են, եւ պետք է մեր ուշադրության ներքո լինեն: Սահմանամերձ գյուղի բնակիչը ոչ մի առումով չպետք է հետ մնա մյուս գյուղերի բնակիչներից: Ավելին, սահմանը պահող գյուղը պետք է ունենա առավելություններ: Սահմանային գյուղերի հզորացումը մեր պետության եւ մեր բոլորի գերխնդիրը պիտի լինի: Պետք է հզորացնենք եւ շենացնենք այս գյուղերը՝ այդպիսով նաեւ ամրացնելով մեր պետության սահմանները»:

Թալիշի դպրոցի տնօրեն Տանյա Միժունցը նշում է, որ վերջին երեք օրը սահմանային վիճակը համեմատաբար հանգիստ էր, եւ գյուղում կրակոցներ

գրեթե չէին լսվում:

«Քանի սահմանը հանգիստ է՝ աշխատում ենք արագ փակել աշակերտների քառորդները, - ասում է դպրոցի տնօրենը, - ուսուցչական անձնակազմի, աշակերտների եւ ծնողների կողմից շնորհակալություն ենք հայտնում ՀՕՍ-ին այսպիսի նախաձեռնության համար: Մենք շնորհակալ ենք մեզ թիկունք կանգնելու համար»:

Մատաղիսի տնօրեն Գեղամ Աղաջանյանը դպրոցում հայոց լեզու եւ գրականություն է դասավանդում: Նա նշում է, որ կրակոցները չեն խոչընդոտում դպրոցի աշխատանքներին. առաջնորդվում են իրենց պլանով՝ գիտակցելով, որ հերոսական գործ են անում:

«Եթե ասեմ, որ իրավիճակը չի ազդում մեզ վրա, սխալ կլինի: Յուրաքանչյուր պայթյունից աշակերտի ուշադրությունը շեղվում է, նույնն էլ՝ ուսուցիչների», - նշում է Գ.Աղաջանյանը:

ՀՕՍ-ուհիներն այցելել են երկու գյուղերի մանկապարտեզներ եւ տեղում ծանոթացել նրանց խնդիրներին:

ՀՕՍ-ուհիները մասնակցել են նաեւ

Մատաղիսի դպրոցի Նոր տավա հանդեսին:

ՀՕՍ-ի Արցախի միավորի ատենապետուհի Արմինե Հարությունյանի խոսքով՝ ծրագիրը շարունակական է լինելու:

Ա. Հարությունյանը նշել է, որ հոկտեմբերին Երեւանում կայացել էր Հայ օգնության միության համահայկական 71-րդ ժողովը, որին ՀՕՍ-ի Արցախի միավորը ներկայացրել է սահմանամերձ գյուղերի աջակցության եւ օժանդակության իր ծրագիրը՝ «Ապահով մանկություն սահմանամերձ գյուղերում» խորագրով: Ծրագիրը ժողովականների կողմից ընդունվել է մեծ ոգեւորությամբ:

«Ապահով մանկություն սահմանամերձ գյուղերում» ծրագրի մեկնարկը տրվել է նոյեմբերի 13-ին: ՀՕՍ-ի Արցախի միավորի նախաձեռնությամբ ԼՂՀ սահմանամերձ երկու համայնքների՝ Մատաղիսի եւ Թալիշի 120 պատանիներ ներկա են գտնվել Ստեփանակերտում գտնվող՝ Սանկտ Պետերբուրգի «Իմպերիալ» շապիտո կրկեսի ներկայացմանը:

Լուսինե ԹԵՎՈՍՅԱՆ



### Սահմանամերձ գյուղերի մանուկները խաղաղություն են երագում

Առաջին անգամ այցելեցի Արցախի սահմանային մի քանի համայնքներ: Պատահական էր, թե տեղին, բայց այցելությունս իրականացավ Ամանորի նախաշեմին: Առաջին անգամ անբացատրելի հպարտություն զգացի այնտեղ ապրող մեր հայրենակիցների համար, որովհետեւ նրանց ականջներում ամեն օր նույն ձայնն է՝ պատերազմի ձայնը, որին կես վախով ու կես ցավով, բայց նաեւ արհամարհանքով են վերաբերում: Դա է ապացուցում այն, որ բոլոր տներում, դպրոցում, մանկապարտեզում տոնածառեր են եւ նախատոնական տրամադրություն: Միաժամանակ, նաեւ մի անբացատրելի փայլ կա նրանց աչքերում, հատկապես՝ երեխաների, ինչպիսին լինում է հուսառատ ու սպասող հայացքներում: Հույս, որը գալիք տարի գուցե լռեն կրակոցները եւ սահմանին կանգնած զինվորի կյանքն այլեւս վտանգված չլինի: Խաղաղության հույսն է, որ ապրում է բոլորի աչքերում...

Երեխաներից շատերը, ցավոք, չեն հավատում Ձմեռ պապիկին եւ ամանորյա հրաշքին:

«Ձմեռ պապիկից մի քանի տարի է խնդրում եմ, որ երազանքս իրականություն դարձնի,- նշում է Մատաղիսի դպրոցի 5-րդ դասարանի աշակերտուհի Աննի, - ուզածս խաղաղությունն է, ինձ ուրիշ ոչ մի բան պետք չէ, բայց երեւի խաղաղությունը շատ թանկ գին ունի եւ

նում սովորող Արմենը հարցիս պատասխանում է, որ Նոր տարուն հեռախոս է ցանկանում, սակայն ընկերներն իսկույն կատակում են. «Ամոթ չէ, որ հեռախոս



Եթե Ձմեռ պապիկն ամենակարող լիներ՝ այն կբերեր...»:

Նույն հարցիս պատասխանելով՝ 6-րդ դասարանում սովորող Դիանա եւ Նախշուն ընկերուհիներն իրար նայելով միաժամանակ նույն պատասխանն են տալիս՝ խաղաղություն... Թալիշի դպրոցի առաջին դասարա-

նում սովորող Արմենը հարցիս պատասխանում է, որ Նոր տարուն հեռախոս է ցանկանում, սակայն ընկերներն իսկույն կատակում են. «Ամոթ չէ, որ հեռախոս

2-րդ դասարանի աշակերտ Դավիթն էլ ավտոմատ է խնդրում Ձմեռ պապիկից. «Որպեսզի հաջորդ անգամ՝ եթե կրակելու լինեն՝ ես պատասխան կրակ բացեմ», - ասում է հպարտ կեցվածքով:

Մատաղիսի դպրոցի Նոր տավա հանդեսը, որին ականատես եղա, հայրենասիրական ոգի էր ամբողջությամբ, բոլոր բանաստեղծությունները ձոնված էին մեկ հերոսի՝ սահմանը պահող զինվորին:

Այցից հետո ականա մտածեցի, թե ի՞նչ են Ձմեռ պապիկից խնդրում շատ ու շատ երկրներում ապրող երեխաները. երեւի խաղալիքներ, գեղեցիկ շորեր, ժամանակակից հեռախոսներ, համակարգիչներ... Իսկ խաղաղության մասին գուցե մտածում են շատ ավելի ուշ՝ հատուկ տարիքում: Ստացվում է՝ մեր երեխաների երազանքները մանկակա՞ն չեն... Հետո հիշեցի, որ մենք էլ Արցախյան պատերազմի տարիներին նույն երազանքն ունեինք՝ չգիտակցելով թե ինչ է խաղաղություն կոչվածը: Միայն գիտեինք, որ դա մի լավ, բոլորի համար սիրելի բան է...

Նոր տարվա գիշերը բոլորս սպասում ենք հրաշքերի: Ես որոշեցի մեկ առ մեկ գրի առնել իմ հանդիպած փոքրիկների երազանքները եւ դնել տոնածառի տակ. գուցե այս տարում խաղաղության հրաշքը իրոք իրականություն դառնա...

Լ.Թ.

### Ամանոր, Նոր տարի կամ Նավասարդ



Ամանորով նշում են տարվա սկիզբը: Տարին ժամանակի սահմանն է, որը վերցված է բնությանից: Դա այն ժամանակաշրջանն է, որի ընթացքում երկիր մոլորակը կատարում է մեկ լրիվ պտույտ արեգակի շուրջը: Երկրի կատարած շրջապտույտը հավասար է 934 միլիոն կիլոմետրի, որն անցնում է մեծ արագությամբ:

Ամանորը հայերը նշում էին տարվա առաջին ամսին՝ օգոստոսին, եւ այն կոչվում էր Նավասարդ: Ամանորը հայկական դիցարանում նոր տարին անձնավորող, «նոր պտուղների ամենաբեր» համարվող աստվածն էր:

Թե ինչպես են Ամանորը նշում Արցախում, փորձեցինք պարզել՝ գրուցելով մի խումբ արցախցիների հետ:

**Արթուր Գրիգորյան. Ստեփանակերտ**  
Ամանորը տոն է, որը բոլորին է ներգրավում իր մեջ՝ մեծ, թե փոքր: Ազդարարում է հին տարվա ավարտը, առիթ է տալիս անցնող տարին վերհիշել կետ առ կետ, հիանալ նվաճումներով, խորհել բացթողումների մասին, փորձել լուծումներ գտնել նոր տարում: Ցավոք, երբեմն նաեւ լինում են ցավալի կորուստներ, որոնք եւս վերհիշելով հանդերձ՝ բոլորը ցանկանում են նոր տարին առանց կորուստների անցկացնել: Ամանորի գիշերը բոլոր խենթ հոգիները համակվում են մեծ երազանքներով՝ ներքուստ համոզված լինելով, որ տվյալ տարում կիրականանան երազանքները:

Ամանորը նաեւ հնարավորություն է տալիս տեսնել հեռու-մոտիկ բարեկամներին կամ ծանոթներին, միասին նշել, ուրախանալ, նորի ու ավելի լավի ակնկալիքով կիսվել միմյանց հետ: Այս տոնն ունի նաեւ թերի կողմեր, որոնցից կնշեմ միմյանց զարմացնելու, միմյանց գերազանցելու նյութական մոլուցքը, որը հաջորդող մի քանի ամիսներին ծանր ֆինանսական կացության մեջ է դնում ժողովրդին: Բայց, այնուամենայնիվ, ըստ իս՝ գեղեցիկ ու հաճելի տոն է:

**Սարգիս Մելիք-Շահնազարով. Ստեփանակերտ**

Այսօրվա աշխարհում գլոբալացման մակարդակը մեծ ազդեցություն ունի ազգային պետությունների վրա: Դա նաեւ վերաբերում է ազգային ավանդույթներին: Ամեն նոր տարի սկսվում էր գարնանը եւ նշվում էր մարտի 21-ին: Դա Վահագնի ծննդյան օրն է (Վահագ-

նը պատերազմի աստվածն է: Տե՛ս Արարատյան դիցաբանություն): Հայկական դիցաբանության մեջ գարունը խորհրդանշում է տարվա սկիզբ, նոր կյանք, բնության զարթոնք, երբ արեւի ճառագայթները լուսավորում են մարդկանց հոգին: Հայության համար շատ կարեւոր է ուսումնասիրել եւ իմանալ իր հին ավանդույթներն ու տոները: Եթե ազգն ունի ուժեղ արմատներ, ապա կունենա նաեւ ուժեղ ապագա:

**Վլադիմիր Գրիգորյան. Ստեփանակերտ**

Իմ կարծիքով՝ այդ տոնը շատ գեղեցիկ խորհուրդ է պարունակում եւ իր մեջ ներառում հոգեբանական մեծ գործոն, այսինքն՝ դա նոր հույս է, նոր սպասելիքներ ապագայի համար: Դա մի օր է, երբ մարդ կարողանում է, լցվելով նոր հույսերով եւ ակնկալիքներով, ազատվել բացասականից՝ այն թողնելով այն անցնող տարում: Դա այն օրն է, որ փոքրիկների համար դառնում է հեքիաթային: Նրանք հավատում են, որ իրենց երազանքներն իրականանում են, եւ դրանցա իրականացնողը Ձմեռ պապն է: Դա այն օրն է, երբ բոլորը ձգտում են ներել իրար: Դա լավագույն առիթն է, որի միջոցով կարելի է հանել չարամտությունը: Պարզապես, ոչ աշխատանքային օրերը շատ են: Իմ կարծիքով՝ մեր պետությունը պետք է շատ աշխատի, իսկ տարվա կտրվածքով ոչ աշխատանքային օրերը մեզ մոտ շատ են:

**Սիրանուշ Սարգսյան. Ստեփանակերտ**

Ամեն ժողովուրդ ունի իր տոն օրերը: Դրանցից առանձնանում է Նոր տարին, քանի որ այն ամենախորհրդավորն է: Լինելով ինչ որ բանի վերջ ու նորի սկիզբ՝ Նոր տարին նախ հնարավորություն է տալիս ինքնավերլուծության, ապրածի արժեւորման ու վերաբերման, նոր գաղափարների ու պլանների ստեղծման: Իհարկե, սա զուտ անձնական ենթատեքստում, սակայն Նոր տարին ընտանեկան տոն է, թերեւս հետաքրքիր է, որ մենք անպայման ուզում ենք մեր տներում անցկացնել այդ պահը, մեր հարազատների ներկայությամբ: Իհարկե, ժամանակի ընթացքում փոխվել է մոտեցումը տոնի հետ կապված: Մենք կարծես թե ավելի շատ տեղ ենք տալիս ժամանակի «պրիստի-ժային ցուլին», ճոխություններին, սա-

կայն ինձ համար կարեւորը տոնի արժեքային կողմն է, նաեւ այն, որպես ինչքանով են պահպանվում մեր ավանդական տոնախմբությունները, կերակրատեսակները, հին տոնական խաղերը: Չէ որ Նոր տարին եւ մյուս տոները նաեւ ավանդությունների պահպանման միջոց են հանդիսանում: Մի կարեւոր նկատառում էլ կա. մենք Նոր տարուն միշտ բարեմաղթանքներ ենք ուղղում միմյանց, եւ այդ բարեմաղթանքների բովանդակությունից է նաեւ գալիս, թե մենք ինչն ենք արժեւորում առավել, քան մնացած արժեքները: Ես վստահ եմ, որ այս տարվա բարեմաղթանքների մեջ խաղաղությունն առաջնային կլինի: Հենց սրա մեջ է տոնի կախարհանքն ու փիլիսոփայությունը, այն մեր ապրումների, մեր երազանքների, սպասումների, պատկերացումների արտացոլանքն է:

**Գայա Ավանեսյան. Ստեփանակերտ**

Ճիշտն ասած՝ դա մարդու էությունից է կախված... Եթե մարդու մեջ «երեխան» առավել շատ է առկա, եթե մարդ լավատես է ու, անկախ ամեն ինչից, կարողանում է հավատալ հրաշքերին նաեւ հասուն տարիքում, նույնիսկ ծերության տարիներին կարողանում է վայելել այդ տոնը... Իմ ամենափրած տոնն է Ամանորը. անհամբեր սպասում եմ նրա գալուն, քանի որ այն հետ բերում է



անակնկալներ: Երիտասարդի պես այսօր էլ սրտի թրթիռով սպասում եմ, որ Նոր տարին կբարեկամի մեր կյանքը, ինչ-որ բան կփոխի դեպի լավը...

Նոր տարին ինձ համար լավագույնի նոր սկիզբ է: Երիտասարդ տարիներին պարզապես մի տեսակ անհոգ էի: Թերեւս դա է տարբերությունը:

**Անահիտ Խուրդյան. Բերձոր**

Ինչպես ցանկացած տոն, Նոր տարին նույնպես ուրախ ու բոլոր պիտիներից անկախ օր է (կամ օրեր՝ այս դեպքում): Ինձ համար, սակայն, անհասկանալի է ձմեռը Նոր տարի նշելը: Այն ինձ համար սկսվում է գարնանը՝ բնության զարթոնքի հետ:

**Աննա Կարապետյան. Երեւան**

Նոր Տարին ամենապայծառ ու խորհրդավոր տոնն է ինձ համար: Հիանալի հնարավորություն է ամանօրյա ուրախ զարդարանքներին, տոնական տրամադրությանն ու գնումներին գուճախե՞մ՝ վերաբերել անցած տարին,

գնահատել ձեռքբերումներն ու երազանքներ պահել հաջորդ տարվա համար: Սա, առաջին հերթին, ընտանեկան տոն է, որը սկսվում է ոչ թե դեկտեմբերի 31-ին, այլ նույնիսկ դրանից շուրջ երկու շաբաթ առաջ, երբ ամեն տեղ զարդարում են եղեւիներն ու սկսում նվերներ ընտրել: Ամանորը ջերմ ու պայծառ հեքիաթ է, որ զարդարում է ձմեռվա ցուրտ օրերն ու բարություն տարածում ամենուր:

**Ռուբեն Հայրիյան. Ստեփանակերտ**

Ավանդականից համարյա թե բան չի պահպանվել. նշելու ձեւը, երեխաների սպասելիքները, թեկուզ Ձմեռ պապիկի հետ կապված հավատքը: Ավանդական նշելու կարգից շատ ենք հեռացել: Իմ ծնողները, որ պատում են իրենց մանկության, պատանեկության տարիների մասին, եւ այդ ժամանակվա տոների, այդ թվում՝ Նոր տարի նշելու մասին, լրիվ պատկերացումս փոխվում է, ու կարծես թե կարոտում եմ այդ հին ժամանակվա տոները նշելու կարգին, որը մենք չենք տեսել, կամ էլ չենք հիշում: Այդ տոնի ավանդական կարգերը հանրության կյանքում վերականգնելու զգալի փորձ չենք արել գուցե, որ կարողանանք վերականգնել այն: Համենայնդեպս, պետք է լավ տրամադրվենք, հավատանք, որ գալիք Նոր տարին կլինի

հաջողությունների, բարօրության ու սիրո տարի: Իսկ ավանդականը վերականգնելու համար մեզ պետք է այդ ուղղությամբ միանշանակ որոշում ու աշխատանք:

**Ինգա Աղաջանյան. Ստեփանակերտ**

Վերջին ժամանակները մի տեսակ անտարբեր, «հոգևած» ենք դիմավորում այն: Մինչդեռ, առաջ ավելի երազանքներով, հավատալիքներով ու սպասումներով էինք դիմավորում: Հավասարություն էր մի տեսակ. հիմա այդպես չէ: Կարեւորը ուտել-խմելը չէ, այլ միմյանց անկեղծ բարեմաղթանքներ ցանկանալը:

**Մարիետա Իշխանյան. Ստեփանակերտ**

Ցանկանում եմ՝ Նոր տարում պատերազմներ չլինեն: Ցանկանում եմ առողջություն ու կապույտ երկինք: Թող գալիք տարին լինի երջանկության եւ ուրախության տարի:

Հովիկ ԱՎԱՆԵՍՈՎ

